

ԵԿԵՂԵՅՑԿԱՆ ԳՐԱՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒԿ ԵԿԵՂԵՅԻ

— Կաթողիկ եկեղեցին մեծ յառաջագիտութիւն է անում նորվեգիայում, ինչպէս պաշտօնական աղբիւրները ցոյց են տալիս: Կաթողիկ եկեղեցին նորվեգիայում ունի արդէն 2 միլիոն քրոնի արժողութեամբ գետին, նորվեգիոյ Գրիտտիանա մայրաքաղաքում հրատարակուում է մի կաթողիկ շաբաթաթերթ, Կաթողիկութեան այս ջանքերը շատ ժամանակ չէ, որ թափում են այս երկրի վերայ: Գլխաւոր գործունեայ գեր կատարողն է 1892-ից ի վեր Փալլիոյ եպիսկոպոսը: Սա իւր նպատակի իրագործման համար նպատակներ է ստանում Քրանսիոյ և Քերմանիոյ կաթողիկներէրց:

— Կաթողիկ եկեղեցու աստակետով քրիստոնեայ եկեղեցին այն ժամանակ կենդանի է համարուում, երբ տարիների ընթացքում նորանոր մարդիկ սրբոց կարգը կանցնեն իրենց առաքինի գործերի պատճառով: Այս սրբացման համար կարգել է նոյն իսկ աստիճաններ և ոչ թէ մի անգամից է կատարուում:

Սրբացուն նախ կոչուում է Աստուծոյ ծառայ, երկրորդ աստիճանն է յարգելի երրորդը՝ Երաննի, և ի վերջոյ սուրբ: Այս ներկայ 19 դարուս ընթացքում 40 անձինք անցել են այդ աստիճանները և հարստացրել սրբոց բանակը:

Կաթողիկ եկեղեցին սրբացման հանդէսը իրեն յատուկ շքով էր կատարում միշտ ս. Պողոսի և Պետրոսի մայր տաճարում: Բայց երբ 1870-ին Հռոմովմբ Բտալիոյ թագաւորութեան մայրաքաղաք հրատարակուեց, իրր ցոյց այդ յափշտակութեան դէմ՝ սկսեցին սրբացման հանդէսը Աստիկանում կատարել: Սակայն ներկայ տարուայ մայիսի 13-ին հանդէսը կատարուեց տաճարում:

Կաթողիկ աշխարհների ամեն կողմերից անհամար բազմութիւն էր թափուել. սակայն մուտքը սոմանկով էր և միայն հրաւիրեալները թուով մօտ 30,000 կարողացան մասնակից լինել հանդիսին: Բայց յիշեալ 30,000-ը՝ համեմատելով ուխտաւորների բազմութեան հետ՝ մի շնչին թիւ էր:

Այս անգամ սրբոց կարգը դասուեցան Անտոն Չաբարիս որ ժողովրդի կրթութեան համար հիմնել էր մի եղբայրութիւն 17-րդ դարում և Պետրոս Փուրէի որ Լատարիեգիայի առաքեալ անունն է կրելիս եղել:

Սրբացման իրաւունքը յատկապէս վերադաշուած է Պապին սկսած 10-րդ դարուց: Կաթողիկ եկեղեցու քրոնիկոնը ցարդ 195 սրբացեալների հաշիւ է ներկայացնում: Սրբացման հանդէսները Աստիկանից կրկին ս. տաճար վերափոխելը եկեղեցա-

կան և քաղաքական իշխանութեանց մեջ հաշտութեան նշան են համարում շատերը:

— Յիսուսեան կարգ. — Կաթողիկ եկեղեցու պատմութեան մէջ մեծ դեր է խաղացել և այժմ էլ խաղում է Յիսուսեան կամ Եղուիտ կոչուած կարգը: Աերջերս կազմած մի ճիշդ վիճակագրական տեղեկութիւն ցոյց է տալիս որ այդ կարգը բարգաւաճ վիճակի մէջ է և գնալով աճում է. մինչդեռ 1844-ին նոցա թիւը հասնում էր 11,203-ի այժմ արդէն զատել է 14,251:

Պրօնական ոչ մի եղբայրութիւն այդքան բազմութիւ անդամներ չունի. իսկ եթէ աչքի առաջ ունենանք որ նորա բոլորն էլ մի խիստ կարգ ու կանոն են ենթարկուած, մի անձն զլուսն ու առաջնորդ է ձանաչուում, որի հրամանը ոչ որ չի համարձակիլ մերժել, այն ժամանակ դժուար թէ կարողանաք երևակայել նոցա ոյժի չափը: Այս տեղեկութիւնները հազորդոյ „Hochland“ շաբաթաթերթը հիացած է նոցա գերազանց կազմակերպութեամբ:

Ամեն մի վանք ենթակայ է մի որոշ շրջանի վարչարեան: շրջաններից կազմուում է մի խորհուրդ՝ զլուսն ունենալով իրանցից ընտրուած մի մի պատգամաւոր: որը գանուում է Յիսուսեան կարգի գեներալի մօտ, իրր ներկայացուցիչ իւր շրջանի և պաշտպանում է իւր շրջանի շահերն ու յայտնում կարիքները:

Խորհուրդներ հինգ են, հետեւեալ հինգ պետութեանց մէջ. 1) Բտալիայում, 2) Քերմանիայում, 3) Քրանսիայում, 4) Իտալիայում և 5) Անգղիայում: Այս պետութեանց մէջ շրջաններ 26 են:

Յիսուսեան կարգի գեներալն ընտրուում է ցմահ ձայների մեծամասնութեամբ: Գեներալի օգնական համարուում են յիշեալ խորհրդի պատգամաւորները, որոնք միշտ նորա մօտ են մնում: գեներալը ունենում է իւր մօտ և մի խորհրդական, որ մի անբուն լրտես է, նոյն իսկ գեներալի քայլերն ու ձեռք առած միջոցները արթնութեամբ հսկող մի անձն, որ իրաւունք ունի քննադատել, հաւանութիւն տալ կամ պախարակել նորա գործերը:

Մինչև Հռոմի առումը, այն է 1870 թիւը, գեներալի արժուատեղին էր յիշեալ քաղաքը. յետոյ երբ այդ յաւիտենական քաղաքը դառաւ Բտալական մայրաքաղաք, նա տեղափոխուեց Քիէղոլէ: որ և ցարդ համարուում է նորա պաշտօնատեղին: Թէև այժմ տարուայ մեծ մասը էլի Հռոմումն է անցկացնում:

Ներկայումս յիշեալ միարանութեան գեներալն է Վարտին Բալանացին: Միարանութեան բոլոր գործերը կատարուում են միայն կրօնաւորների ձեռքով: իսկ աշակերտները և ուխտաւորները՝ մինչև որ չհասնեն կրօնաւորութեան աստիճանին՝ իրաւունք չունին ոչ մի գործի մասնակցել. վերջիններն միայն

եկար նախապատասխան ու փորձարան շրջաններից անցնելուց յետոյ արժանանում են կրօնաւորական աստիճանին եւ այդ պահանջում է մեծ անխնայութիւն եւ համարեւորիւն:

ՕՐԹՈՒՌՈՒՔԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Մայիսի 29-ին Ռուսաց եկեղեցւոյ դաւանները և Համայն Ռուսոյ բազմալեզու հպատակները առանձին ոգևորութեամբ ընդունեցին Ն. Կ. Ք. Մեծ իշխանուհւոյ Տատիանա Նիկողայեւնայի՝ Նոցին Ապսերական Մեծութեանց երկրորդ Գասեր, ձերբազեան աւետիքը, վերադարձելով Չերմաջերմ մաղթանքներ առ Բարձրեալն վասն կենաց Նորածին Գլխուհւոյ և բարորութեան Օգոստոսիան Տան սիրեցեալ Թագաւոր Ապսեր և Թագուհւոյ Ապսուհուհւոյ:

— Առջինի թեմում սոփորութիւն էր մտել թաղել սրբազնագործ պաշտօնականներին երեսը գեպի արևմուտք դարձրած: Թեմակալ Առաջնորդի հարցին՝ այս սոփորութեան խորհրդի մասին, զիտակ անձինք յայտնել են: որ այդ սոփորութիւնը շատ հին է և բացատրուում է ասպէս թէ հոգիւր իւր մահից յետոյ էլ իրը շարունակում է խրատել իւր հօտը՝ նոյն սոփորութիւնը ունիատներն էլ ունին և նորա բացատրում են այնպէս թէ ունիատ քահանաները իւրեանց մահից յետոյ էլ հոգւով և մարմնով զեպի Հոսով են նայում: Սորա դեմ Ս. Առաջնորդը անօրինել է, որ գործակալ քահանաները հետեւեն այդ սխալը ուղղելու և թէ աշխարհականներին և թէ հոգևորականներին թաղեն երեսները գեպի արևելք դարձրած՝ համաձայն հաւանդ սոփորութեան և կանոնաց քրիստոնէական եկեղեցւոյ:

— Եկեղեցական քարոզի խնդիրը շատ է զրազեցնում Ռուսաց հոգևոր իշխանութեանը և ամեն տեղ մեծ ջանքեր են գործ դնում գրաւելու ժողովուրդի սէրը գեպի հոգևոր խրատը. սակայն ամեն տեղից մեծ արտունջներ կան որ քարոզի խնդիրը Ռուսաստանում զեռ շատ պակասաւոր կողմեր ունի: որոնց մասին Ռորկ. Յեթ. շարժմաներ թըր հոգևոր Առաջութեան առանձին ուշադրութիւնըն և հրաւիրում:

— Երբ 1887 թուականին ռուս կառավարութիւնը Բալթեան ասպետութիւնից պահանջեց, որ իրենց հիմնած և պահպանած ժողովրդական ուսուցչական դպրանոցներում ուսանողներ մտցնեն իրեն միակ դասաւանդութեան լեզու և դպրոցներն էլ կազմակերպեն: այն ժամանակ այդ դպրանոցների մեծ մասը փակուեցաւ և մնաց միայն 2 դպրանոց: Աուրլանդիոյ դպրանոցն (Կրմաուի մէջ) այդ երկուսից մինն էր: որին կառավարութիւնն իրաւունք տուեց շարունակել մինչև 1894—95 թուականը:

որպէս զի արդէն ընդունուած սաները կարողանան աւարտել:

Երբ 1895 Աուրլանդիոյ ասպետները յայտնեցին, որ պատրաստ են ուսանողները դասաւանդութեան լեզու ընդունել: կառավարութիւնը մերժեց ասպետութեան ներկայացուցած կանոնները հաստատել: որովհետև զոհացուցիչ չեն եղել և պահանջել է ի միջի այլոց, որ զերմաներէնն ապագայում մինչև իսկ դասաւանդութեան առարկայ չլինի: որովհետև այդ լեզուն ժողովրդական ուսուցիչների համար բոլորովին անօգուտ է: Տարակուսելի է, ասում է Evang.—Luth. Kirchenzeitung-ը, որ ասպետները շարունակեն դպրանոցը պահպանել:

— Ռուսաստանից վաղուց ի վեր առատութեամբ նուէրներ գնում են Յունաց մի քանի վանքեր: մանաւանդ Աթոսի լեռան ճգնաւորներին: Արքիմններս շատ յաճախ ուղարկում են նուէրակներ: որոնք Չերմաջերմ ժողովրդի տուրքերը տարեց տարի տանում են իրը այդ սրբախայրերը: Դեռ անցեալներում յայտնուեց, որ այդ տուրք կոչուած սուս ճգնաւորներից ոմանք ժողովրդի տուրքերով փառաւոր կեանք են անցկացնում: Ա. Պոլսոյ մէջ, ոմանք նոյն իսկ սան և ընտանիքի տէրեր են:

Մի ժամանակ նուէրները զգալի կերպով նուազել էին գեպի յիշեալ ճգնաւորանները. այժմ կրկին զարթնել է ժողովրդի մէջ նուիրատուութեան տկարացած եռանդը: Իսկ Ռ. սինոդը միջոցներ է ձեռք առել: որ գոնէ այդ նուէրները իրենց տեղերը հասնեն: ուստի հրատարակում է ի գիտութիւն բոլոր Ռուսաց ժողովրդին: որ միայն այն նուէրները իրենց տեղը կը հասնին: որոնց հատարողները իրաւունք են ստացել ու Ամսոցից:

— „Сиб. Вѣдомости“ ի ասելով Եսակուտի շրջանում նորալանդէ յարմուտել: որ կոչուում է Առախորիկոյ: որ եղած աղանդներից շատ տարբեր է: Երբ աղանդապետին ձերբակալեցին: վերջինս յանձնեց պրոկուրորի օգնականին մի մեծ տետրակ (մօտ 150 թերթ), որ բովանդակում էր այդ աղանդաւորների գլխաւոր գաւառաբանական կէտերը: Այս աղանդաւորների մէջ մի բան աչքի է զարնում: որ չեն ուղում ձանաչել ներկայումս տիրող քաղաքական կարգերը: Գատախազի օգնականի աչքի առաջ աղանդապետը և իւր ընկերները պատաստում էին զրաները ինչան իրենց արհամարհանաց: Յանցաւորները բանում հրաժարուում էին օրական իրենց համար նշանակեալ հացն ընդունել: այլ ապրում էին փշրանքներով: որ բանտարկեալները իրողորմութիւն տալիս էին նոցա: Այս վերջին գեպերը լրացրի կարծիքով պարզ խելագարութեան նշաններ պիտի ընդունել:

ԱՆՊԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻ

Աստուածաշունչի ամբողջական թարգմանութիւններ ցարգ եղել են և հրատարակուել 40 եւրոպական լեզուներով և բարբառներով 41 ստիական, 14 աֆրիկեան, 10 աստրալեան և ովկիանեան և 3 ամերիկեան, ինչպէս հաշուել է բրիտանական արտասահմանեան աստուածաշունչի քարտուղար Աատար: Ասիական Աստուածաշունչի հրատարակութեանց մեծ մասը այս դարումն է եղել միսիոնարների ջանքերով. մտադրութիւն կայ զեռաստիական շատ այլ լեզուներով թարգմանելու: Աֆրիկեան և ովկիանեան հրատարակութիւնները բոլորը մեր դարումն են կատարուել, որ հետզհետէ բազմանալու վերայ են: Իսկ մասնական թարգմանութիւնները եթէ ի հաշիւ առնենք, վերոյիշեալ թիւը կը քառապատկուի:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵՎԵՂԵՑԻ

Լեպսիուսը ևս նորա «Քրիստոնեայ արեւելք» ամսագիրը:— Զնայելով որ գերմանական պետութեան քաղաքականութիւնը շատ թրքամոլ է և Վերմանեան է բոլոր պետութեանց մէջ, որ մարդասպանին օգնութեան ձեռք է կարկառում քրիստոնեաներին ճնշելու, յաղթահարելու և կտորելու, այնուամենայնիւ չպէտք է շփոթել գերմանական պետութեան անարդար վարմունքը գերմանացի ժողովրդի զգացմանց հետ: Երբարտի ընթերցողներին արդէն յայտնի է թէ Բեռլինում Գրանկֆուրում ընկերութիւններ կազմուեցան, կտորածից պրծած և դառն աղքատութեան մէջ ընկած և սովի վտանգի մատուած տառապեալ և բազմաշարժար հայերին օգնելու: Այդ ընկերութիւնները միացան և այժմ իրենց բազմամիւ ճիւղերն ունին Վերմանիոյ գանազան տերութեանց քաղաքներում և գիւղերում: Ընկերութիւնը արդէն հաւաքել է մօտ 700,000 մարկ և ուղարկել է իւր ներկայացուցիչը Պարսկահայաստանում որբանոցներ բանալու տաճկահայ որբերին խնամելու համար:

Այս շարժման ոգին է եղել և է հաշակաւոր Լեպսիուս գիտնականի որդին Յովհաննէս Լեպսիուս, որ անօրինակ, քրիստոնէի վայել անձնութեամբ զո՛հ բերեց իւր պաշտօնը հայոց այս գործին: Անձամբ ճանապարհորդեց Փոքր-Ասիա և ազգու գրչով նկարագրեց Հայոց կտորածը իւր բոլոր արձախիւրներով ու սարսափով: Նորա գրքի է: Եւ պագրութիւնն է արդէն լոյս տեսել մինչև այս տարուայ յունուար ամիսը և 13000 օրինակ տարածուել:

Այս շափով զո՛հ չմնալով Յովհաննէս Լեպսիուսը այս տարի յունուարից Բեռլինում հրա-

տարակում է մի ամսագիր «Քրիստոնեայ արեւելք» (der Christliche orient) անունով, որ թեպէտև ընդհանրապէս բոլոր արեւելեան քրիստոնեաների զանն է պաշտպանում, ստարինի գիտնականը, բայց ինչպէս մեզ հասած յունուարի, փետրուարի, մարտի և ապրիլի համարներից երևում է՝ շատ մեծ տեղ է բռնում հայոց գաղտը: Երբարտի ընթերցողներին մի զազափար տալու համար յառաջ ենք բերում այս չորս համարի մէջ տպագրուած հայոց վերաբերեալ յօդուածների վերնագիրները:

№ 1. Լիւթերի ժամանակից մի հրաւեր արեւելեան քրիստոնեաների համար: Երապկերի արեան բազմիսը: Բողոքական եկեղեցու սկզբնաւորութիւնը Հայաստանում 1813—1850: Ընկերութիւն բողոքական հայոց համար Բեռլինում 1863 թուականից: Լուրեր հայոց նպաստելու գործի մասին:

№ 2. Էջմիածին (Պարսպետ վ.): Ամերիկեան քարոզիչներ Խուրքիայում, Նոցա ջանքն ու ազգեցութիւնը: զեկսպանական վաւերագիրներ հայոց խնդրի: Նամակներ Սուամիայից և Բուլղարիայից (Ամիրխանեանց): Տեղեկութիւններ հայոց նպաստող զաշնակցութեան, Հաշիւ: Երդրումի նպաստող մասնաժողովի մասին:

№ 3. Այստեղ, ինչպէս և հետեւեալ Գ. համարում Հայոց մասին եղած մի քանի յօդուածները շարունակուում են: այլև կայ «Տեղեկութիւն հայոց միջազգային օգնութեան մասին»:

№ 4. Պեկսպանական վաւերագրեր հայոց խնդրի: Երապկերի: Ակի և Մալաթիոյ կտորածները և Թուամյեան ու Պրուսիոյ կառավարութիւնը: Թոյնելով որ Երբարտի ընթերցողներից նոքա, որոնք գերմաներէնին տեղեակ են, իրենք ձեռք բերեն այս հետաքրքրական ամսագիրը, մենք այստեղ յառաջ ենք բերում վերջին յօդուածն ամբողջապէս:

Պրուսիոյ լանդտագում՝ Իրեսխոխան պատտօր Շտեօկկերը, որ երբեմն գրան երեց էր և յայտնի հակասեմական է: այս տարուայ 11 նիստին փետրուարի 30 կառավարութեան դիմեց հետեւեալ բանախօսութեամբ:

«Եմ խօսք խնդրելու պատճառը մի առանձին զեպք է: որ անցեալ տարի այստեղ Բեռլինում է տեղի ունեցել, Բանն այն է, որ երբ այստեղ աւետարանական հոգևորականները հայոց յայտնի ուսուցչապետ Թուամյեանին հրաւիրեցին խօսելու, նորան այդ արգելեցին: սպասեալով արտասել: Այլև նորան արգելեցին բան տպագրելու, որով անգէն են դարձուցել նորան: Երդ այն ժողովների, որ ոչ միայն աւետարանական, այլև կաթոլիկ եկեղեցու սահմաններում տեղի էին ունենում, զիտաւորութիւնն էր բարեգործութիւնը: Մարդիկ կամենում էին շուտ Հայաստանի կես միլլիոնի:

Թրքաց սարսափների զոհերի համար ողորմութիւն ժողովել, Բնական է, մարդկանց այդ գործի կողմը շահելու համար, պէտքեր գործին տեղեկացնել, որովհետեւ մեր մամուլը, զանեա սորա ամենամեծ մասը, անհասկանալի պատճառով Հայաստանի կոտորածների մասին բոլորովին լուսութիւն էր պահպանել, Այս մի ապացոյց է, թէ որպիսի անխտաշելի ձեռքերում է մեր հասարակաց կարծիքը, * Ես կուզէի պ. Պիկկերտին ևս այս մի անգամ էլ ասել, երևակայէ՞ք, թէ Քուրբիայում հենց միայն 10 հրէայ սպանուած լինէր. ինչպիսի անլուր մի գոտում-գոչում կը բարձրանար ամբողջ Աւրապայում և քանի ամիսներ կը տևէր: Ար այստեղ ինչո՞րքը 100000 քրիստոնեայ հայերի մասին էր, ամենին ի նկատի շտնուեցաւ: այդ կարելի էր զանց անել և օրակարգին անցնել, (Շատ ճիշտ է. աջակողմ), Ահա տեսնուում է, թէ ինչ թշուառ ճակատագիր է, երբ մամուլը և հասարակաց կարծիքը կեղծ ձեռքերում է: (Շատ ճիշտ է. աջակողմ), Այսպէս ուրեմն պ. Քուրբիայանին սպանացին, որ այլևս չիտու (հայոց մասին), այլ ապենա կարտաքսուի:

Բայց այս հրամանը զեռ Քուրբիայանին չհասած, նա միքանի անգամ արգէն խօսել էր, ևս կարող եմ միայն ասել, որ նա շատ լափաւոր ևս վայելուի կերպով խօսեց: Ամենից առաջ նա իւր երկրի հանգամանքները բացատրեց: հայրամայրները նկարագրեց և պաշտպանեց իւր ազգը այն մեղադրանքներէն, որ իրրե թէ յեղափոխականներից և անիշխանականներից էր կազմուած: Երբ այնուհետև նորա զիտին նախատիքներ էին թափում, թէ նա իւր խօսքը չէ պահել, որովհետև իրրե թէ նա սուր թանկը ներում ստանալով սորան խտապեղ է Քուրբիոյ զէմ չգործելու: Աւերջին ժամանակ նորան բամբասում են, որ իրրե թէ նա անազնիւ և շահամոլ է: Այս բոլորը բաց է իրաց անձիչդ է: Աւրեմն, պարոնայք, Քուրբիայանին աստեղ ոչ միայն արգելել են խօսելու իւր մեծ, արգար և աշխի գործի մասին, այլև բացի այդ մամուլի միջոցով այն մամուլի որ կիսապաշտօնական է կոչուում, անարգել են: Ես չեմ կարող ուրանալ, որ այս մարդուն մեղնում իւր ազգի զիտին եկած սարսափելի ոճրագործութեանց մասին խօսել արգելելը ևս ստորացումն էմ համարել: Նա անարգել խօսում է Զուրիցերիայում, Քրանսիայում, Բելգիայում, Անգլիայում, ինչու ոչ մեղնում: Կի՞թէ մենք առանձին առիթ ունինք, Բարձրագոյն Գոնից վասիւնալու կամ բնդզիմութիւն յարուցանելով չթողնէր, որ մարդիկ խախտ իրենց պաշտպանեն այս ահաւելի անազորոյն զազանութիւններից:

Ես չեմ կամենում արտաքին քաղաքականութեան սահմանը մտնել, ևս այստեղ կամենում եմ միայն այն ասել, ինչոր այժմ համարեա ամեն մէկը գիտէ և ինչոր բոլորովին ամեն կողմից փաստերով հաստատուած է: Կենք գիտենք, որ Հայաստանում քրիստոնեաները հալածանքի, արհուրուշա զազանութեանց և անլուր ոճրագործութեանց են մատնուած և այն էլ այն աստիճանի, որ երբէք եղած չէ:

Նոյն խի Հաղթանակեցող կայսրների հալածանքները ոչ թուով և ոչ էլ զազանութեամբ կը համենին թուրքերի ոճրագործութեանց: Եթէ մէկը կամենար այս մասին վեճի մտնել, ևս կարող էի զեսպանների անցեալ տարուայ հաղորդագրութիւններից հաստատուածներ կարգաւ ձեր առաջ, որ կը հաստատէին իմ ասածը: Այս զեսպանական հաղորդագրութեանց մէջ առանձնակի շեշտուում է այն, որ պետութեան պաշտօնեաները և զինուորները մասնակցել են այս արհաւիրքներին. այնտեղ բացորոշ հաստատուում է, որ այս հալածանքներն սկսուած են մահաբեական գրոգազանդայի այդ հրոյ և սրոյ առաքելութեան շնորհիւ. պարզ ապացուցուած է, որ եթէ քրիստոնեաները մահաբեական դառնան, նոցա կինայեն: Արդ այստեղ Պրուսիայում միայն Քուրբիայանին արգելեցին իւր անբախտ և բազմաշարքար ազգի համար համակրանք յարուցանելու: սրտեր ջերմացնելու և կենդանացնելու:

Թերևս պ. Նախարարը կարող է մի խօսքով պարզել գործը: Այն քրիստոնեայ շրջանները, որոնց ևս եմ պատկանում, այն ժամանակ շատ զրգհամակում էին Քուրբիայանի հետ այդպէս վարուելու համար: Ես չնորհասպարտ կըլլնէի, եթէ Նախարարական սեղանից մի խօսք ընկներ, որ այս վերգոմմունքը խաղաղեցնել կարողանար:

Ներքին գործոց նախարար Քրայհերր Պիկկե՛ն պատասխանում է:

Պարոնայք, ճիշդ է որ հայ ուսուցչապետ պատար Քուրբիայանին, որ Քուրբիոյ հպատակ է, իմացուցել են, որ նա կամ զաղարեցնէ իւր յուզիչ ճառախօսութիւնները, որ նա այստեղ զանազան ժողովներում արել է, կամ աչքի առաջ ունենայ որ երկրից կարտաքսուի:

Սորա հիմքը արտաքին քաղաքականութիւնն է: Աւսուցչապետ Քուրբիայանը չի աշխատել միայն ինչպէս պ. երեսփոխան Շտեօկկերը բացատրեց, հայոց համար սրտեր շահել, այլ նա մի այնպիսի կեղանակով է արել, որ կոչու ու կուպիտ կերպով անցել է անխառնութեան սահմանը, որ պէտք է պահել զէպի իւր հայրենի տէրութիւնը և մանաւանդ ամեն բանից առաջ զէպի իւր պետը (այսինքն սուլթանը), Քուրբիայանի գործողութեանց երկար ակնաւաւես լինելը չէր կարող համապատասխանել այն բարեկամական յարաբերութեանց, որ մենք ունինք բարեկամական յարաբերութեանց:

* Հնդկական աննարկում է Հրէաներին, որոնց մեղքն է համարեա ամբողջ գերմանական մամուլը:


ձրրագոյն Գրան և յատկապէս սորա բարձր պետի Տեառն Մնացեալ նորա բոլոր արասյայտութեանց դէմ Հայերի համար բարեացակամութիւն և համակրութիւն յարուցանելու համար ոչ մի կերպով արգելքներ չեն եղել:

ԲԱՃԻՆ ԼԵԹԱՆՈՍԱՅ.

— Անգլիայում 1880 թուականից իվեր մի միասինարական ընկերութիւն է հիմնուել Սենանների մէջ քրիստոնէութիւնը տարածելու նպատակով: Այդ քարոզչական ընկերութիւնն այժմ Հընդհաստանում, Յէյլոնում և Չինաստանում ունի 200-ից աւելի եւրոպացի կանայք (որոնց եօթը բժիշկ են և շատերը տեղեակ բժշկութեան արուեստին), որոնց գործին օգնում են 700 բընիկներ, որոնք ուսուցչուհիներ կամ աստուածաշունչ ընթերցող դպիրներ են: Անցեալ տարի սորա այցելել են 6300 սենանների և բնակիչ կանանց աստուածաշունչ ուսուցել: 7000-ից աւելի ազգիկներ յաճախում էին ցերեխոթիկ դպրոցները և 178000 կին ու աղջիկ խնամում էին հիւանդանոցներում: զեղատներում կամ իրենց տներում:

Ամերիկա. Գերմանացիք տիրելով Աամերունին հետզհետե քաղաքակրթում են այդ երկիրը և քրիստոնէայ դարձնում: Այս երկրի կառավարիչը Չ հրովարտակ է հրատարակել. մէկով յայտնում է որ կանայք ուրիշների մանաւանդ իրենց այր մարդու յանցանքի պատճառով չպէտք է բանտարկուին: երաշխաւոր դառնան և կամ ծախուին. միւսով որ տեղացի քրիստոնէի կին ու երեխաները չեն կարող մի ուրիշի սեփականութիւն համարուիլ: ինչպէս ցարք կար ըստ հեթանոսական սովորութեան:

Ազգանդայում 57,000 տեղացիներ գանւում են միասինարների աղբեցութեան տակ որ կարգալ գրել գիտեն: ունին 321 մատուռ. բնիկներից կան ուսուցիչներ և ուսուցչուհիներ: Գրիստոնէութիւնն այնպէս արագ յառաջագիժում է Ազգանդայում որի նման տեսնուած չէ միասինարական գործում:



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

Հ. ԳԵԼՅԵՐ.

ՀԱՐԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԲՈՒՉԱՆԳՐԱԿԱՆ ԿԱՅՈՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

(Abriss der byzantinischen kaisergeschichte.)

« Այլ երբ և իցե պարսպել է բիւզանդական անցեալի ասպարիզում: նա գիտէ թէ ինչքան զգալի և ցաւալի է: որ դեռ չկայ բիւզանդական պատմութեան համառոտ: մտասհելի և դիտութեան նոր պահանջներին համապատասխան մի նկարագրութիւն: Ահա այդ պահաւր այժմ լրացել է. արքունական խորհրդական Պ. Հ. Գելցերը՝ Սնայի պատմութեան պրոֆեսորը՝ յանձնառու է եղել իմ խընդիրքով տալ բիւզանդական պատմութեան նկարագրութիւնը: որ գրքիս յաւելուածն է կազմում էջ 911—1067: Գրուածքի արժանիքի և թերութեան բացարձակ պատասխանատուն ինքը Պ. Հ. Գելցերն է: »

Այս խօսքերը գրողը Կարլ Կրումբախերն է իւր բիւզանդական մատենագրութեան պատմութեան յառաջարանի մէջ: Աթէ մինչև այսօր նոյն իսկ գերմաներէն լեզուով պահասել է բիւզանդական պատմութեան յարմար գործածելի ձեւնարկի: դա ունի իւր պատճառները: Մինչդեռ յունական դասական անցեալի իւրաքանչիւր երևոյթ՝ գրական—պատմական: զեղարուեստական: փիլիսոփայական և ըն սկսած միջին: մանաւանդ վերածնութեան դարերից քաղաքակրթ Նւերոպայի խորը և բազմակողմանի ուսումնասիրութեան առարկայ էր և է: նոյն յունական կեանքի անմիջական ժառանգն ու շարունակողը: Բիւզանդիոնը իւր յայտնի արեւելա—յունական քաղաքակրթութեամբ անուշադիր էր թողնուել և մինչև անգամ արհամարհուել: միայն վերջերս են զգացել այդ ընթացքի սխալը և մեծ եռանդով սկսել թերին լրացնել: նոր ուղղութեան ամենագորեղ զարկ տուողը եղաւ Միլնիկների պրոֆեսոր յիշեալ Պ. Կրումբախերը: որ 1890 թ. հրատարակեց առաջին անգամ՝ բիւզանդական գրականութեան պատմութեան առաջին ձեւնարկը և հաստատ օրինակներով ապացուցեց: որ ոչ միայն արհամարհելի չէ: այլ և անհրաժեշտ է լաւ ուսումնասիրել բիւզանդական անցեալը մարդկային քաղաքակրթութեան կապն ու ընթացքը լաւ ըմբռնելու համար: նորա

* Տեառն. Karl Krumbacher, Geschichte der byzantinischen Litteratur, München, 1897 էջ XI յառաջարան: